ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, Ֆաքս՝ (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

N 01/61-12872 «21» 07 2020 թ.

«ԷԿՈՄՖՈՐԹ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Դ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
ք. Երևան, Կոմիտասի պող../Շ/51,4հարկ/ 17 հեռ. 093 53 01 71

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրն միակողմանի (մասնակի) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԷԿՈՄՖՈՐԹ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 21.02.2020 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/6» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետերի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի փողոցներում բետոնե արգելապատնեշների տեղադրման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Նշված պայմանագրով աշխատանքների հանձման վերջնաժամկետ էր սահմանվել՝ 30.06.2020 թվականը:

Վերը նշված պայմանագրի շրջանակում, Ընկերությունը պայմանագրով նախատեսված 7740000/յոթ միլիոն յոթ հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամի փոխարեն կատարել է 438790/չորս հարյուր երեսունութ հազար յոթ հարյուր իննսուն/ ՀՀ դրամի չափով աշխատանքներ, չեն կատարվել 7301210/յոթմիլիոն երեք հարյուր մեկ հազար երկու հարյուր տաս/ ՀՀ դրամի աշխատանքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն

կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Վերը նշված պայմանագրերի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է նշված պայմանագրերով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվում է Ընկերության հետ կնքված աշխատանքների գնման պայմանագրերից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Կատ. Է. Կիրակոսյան
011514129